# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2014 թվականի մարտի 21-ի թիվ 5 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Մրցույթի ծածկագիրը ՀՀ ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԱՊՁԲ-5

Պատվիրատուն՝ ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի կոմունալ ծառայություններ ՀՈԱԿ-ը, որը գտնվում է գ. Բջնի 1-ին փողոց,շենք 102 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում, որն անցկացվելու է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով, կառաջարկվի կնքել «կոմունալ ծառայություններ ՀՈԱԿ-ի կարիքներ համար ԱԳՊ 18/5204/ ավտոաշտարակի վարձակալության ձեռք բերման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու Բջնի համայնքի կարիքներ համար ԱԳՊ 18/5204/ ավտոաշտարակի ծառայության ձեռքբերումը:

Գնումները ֆինանսավորվելու են Բջնի գյուղի Բջնիի կոմունալ ծառայություններ ՀՈԱԿ-ի պահպանման 2014 թ.-ի բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման նախընտրելի ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2014թ դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են մասնակցել մրցույթին, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ , կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգով գնման հայտարարության հիման վրա պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձևով ստանալ հրավեր:

Պարզեցված ընթացակարգով գնման փաստաթղթային ձևով հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 1000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Բջնիի կոմունալ ծառայություններ ՀՈԱԿ-ի հաշվեհամարին 2/Հ 16028015514600: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձևով տրամադրել հրավեր:

Պարզեցված ընթացակարգով գնման հայտերը անհրաժեշտ է ներկայացնել Կոտայքի մարզ գ. Բջնի 1-ին փողոց,շենք 102 հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 10-րդ օրվա ժամը 15:00-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:Հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում:

Հայտերի բացման վայրը, օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Հաղթող մասնակցին որոշելու համար կիրառվելու են հետևյալ չափանիշները

- հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող ,բավարար գնահատված և մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Նախքան պայմանագրի կնքումը գնահատող հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկել գնման բողոքարկման խորհուրդին: Բողոքը կարող է ներկայացվել միայն «Գնումների մասին»ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«ԲՋՆԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀՈԱԿ

*Հաստատված է*

*N ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5 ծածկագրով*

*պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի*

*2014թ. Մարտ 21-ի թիվ 5 որոշմամբ*

# «ԲՋՆԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀՈԱԿ

# Հ Ր Ա Վ Ե Ր

*«Բջնիի կոմունալ ծառայություններ» ՀՈԱԿ-ի* կողմից

Բջնի համայնքի կարիքների համար ԱԳՊ 18/5241/ԳԱՁ 53 / ավտոաշտարակի վարձակալության ձեռքբերման նպատակով

հայտարարված պարզեցված ընթացակարգի

*Հարգելի մասնակից*

*Նախքան պարզեցված ընթացակարգի հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող պարզեցված ընթացակարգի հայտերը ենթակա են մերժման:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*«Բջնի կոմունալ ծառայություններ» ՀՈԱԿ-ի* կողմից Բջնի համայնքի կարիքների համար ԱԳՊ 18/5241/ԳԱՋ 53 / ավտոաշտարակի վարձակալության ձեռքբերման նպատակով հայտարարված պարզեցված ընթացակարգի հրավերի

## ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը

2. Մասնակցի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

3. Պարզեցված ընթացակարգի հրավերի պարզաբանումը և բաց ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու կարգը

4. Պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնելու կարգը

5. Պարզեցված ընթացակարգի հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը

6. Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովումը

7. Պարզեցված ընթացակարգի հայտերի բացումը

8. Պարզեցված ընթացակարգի հայտերի գնահատումը և համեմատումը

9. Պայմանագրի ապահովումը

10. Պայմանագրի կնքումը

11. Պարզեցված ընթացակարգի արդյունքների ամփոփումը

12. Պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելը

13. Մասնակիցների հետ բանակցություններ վարելու անթույլատրելիությունը, տնտեսական մրցակցության սահմանափակման դեպքերը բացահայտելը և կանխարգելելը

14. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը:

# ՄԱՍ II. ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

Ընդհանուր դրույթներ

Պարզեցված ընթացակարգի հայտը

Մասնակցի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը

Պարզեցված ընթացակարգի հայտի գնային առաջարկը

Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու կարգը

Հավելվածներ

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն *Բջնիի կոմունալ ծառայություններ ՀՈԱԿ-ի* կողմից (այսուհետև Պատվիրատու) Բջնի համայնքի կարիքների համար ԱԳՊ 18/5241/ԳԱՁ 53 / ավտոաշտարակի ծառայության ձեռքբերման նպատակով, ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5 ծածկագրով անցկացվող պարզեցված ընթացակարգի (այսուհետև պարզեցված ընթացակարգ)հայտարարության

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք), ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված համապատասխան կարգի (այսուհետև Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված պարզեցված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև նաև Մասնակից) տեղեկացնելու պարզեցված ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, պարզեցված ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ

1. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2. սույն հրավերի 4.1.1 կետով սահմանված դեպքերի:

Սույն պարզեցված ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պարզեցված ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

ՄԱՍ I

## 1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում Բջնի համայնքի կարիքների համար ԱԳԴ 18/5241/ԳԱՁ 53 / ավտոաշտարակի ծառայության ձեռք բերումը:

Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

## 2. Մասնակցի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

2.1 Պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը պետք է ունենա տվյալ գնումներին մասնակցելու իրավունք և բավարարի սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:

2.2 Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,
2) մասնագիտական փորձառություն,
3) տեխնիկական միջոցներ,
4) ֆինանսական միջոցներ,
5) աշխատանքային ռեսուրսներ:

2.3 Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,
2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

## 3. Պարզեցված ընթացակարգի հրավերի պարզաբանումը և պարզեցված ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել պարզեցված ընթացակարգի հրավերի պարզաբանում:

Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին՝ գրավոր ձևով: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան պարզեցված ընթացակարգի հայտերի բացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ:

3.2 Պատվիրատուն պարզաբանումը տրամադրում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանում տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցում կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի I մասի 3.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Պարզեցված ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պարզեցված ընթացակարգի հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում: Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում պարզեցված ընթացակարգի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

3.5 Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

3.6 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել սույն հրավերին համապատասխան կազմակերպված պարզեցված ընթացակարգի անցկացումից ցանկացած ժամանակ՝ պարզեցված ընթացակարգի հայտարարության հրապարակման պահից մինչև պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի կողմից հաղթող ընտրելու մասին որոշման կայացումը:

## 4. Պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնելու կարգը

4.1 Պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում պարզեցված ընթացակարգի հայտ: Մասնակիցը չի կարող նույն պարզեցված ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Պարզեցված ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Պարզեցված ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Պարզեցված ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում

«Պ արզեցված ընթացակարգի հայտերը պատրաստելու» հրահանգում:

4.1.1 Մասնակիցները կարող են պարզեցված ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր,

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները,

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

4.2 Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան պարզեցված ընթացակարգի հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 15:00-ն, ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեով: Պարզեցված ընթացակարգի հայտերը ստանում և պարզեցված ընթացակարգի հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ա.Ավետիսյանին: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում` ըստ ստացման հերթականության` ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք:

4.3 Մասնակիցները պարզեցված ընթացակարգի հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը,

2) գնային առաջարկը,

3) հայտի ապահովումը,

4) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ) և

5) էլեկտրոնային փոստի հասցեն:

4.4 Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված պարզեցված ընթացակարգի հայտերի վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

## 5. Պարզեցված ընթացակարգի հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն պարզեցված ընթացակարգի հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից պարզեցված ընթացակարգի հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտում փոփոխությունների մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ « Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու» հրահանգի 4.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով` դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև պարզեցված ընթացակարգի հայտերի բացումը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

## 6. Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովումը

6.1 Մասնակիցը, պարզեցված ընթացակարգի հայտով, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է պարզեցված ընթացակարգի հայտի ապահովում: Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովման չափը չի կարող պակաս լինել պարզեցված ընթացակարգի հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

6.2 Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 4 հավելվածով:

6.3 Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից,

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

## 7. Պարզեցված ընթացակարգի հայտերի բացումը

7.1 Պարզեցված ընթացակարգի հայտերի բացումը կկատարվի պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստում՝ բաց ընթացակարգի հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 11:00-ին, *գ. Բջնի 1-ին փողոց, շենք 102* հասցեում:

7.2 Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն պարզեցված ընթացակարգի հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը), տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին, յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված, տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

7.2.1 Պարզեցված ընթացակարգի հայտերի բացման նիստում՝

1) պարզեցված ընթացակարգի հանձնաժողովը գնահատում է՝

ա. պարզեցված ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող ծրարները,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պարզեցված ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին,

գ. առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին.

2) հանձնաժողովի նախագահը հայտարարում է պարզեցված ընթացակարգի յուրաքանչյուր մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

3) ներկայացված գնային առաջարկների հիման վրա որոշվում են առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակցները: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.4 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

7.2.2 Կարգի 53-րդ կետի համաձայն՝ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում՝

ա) հաղթողին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գնի նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները /համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները/,

բ) հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ) բանակցությունները վարվում են ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը,

դ) յուրաքանչյուր մասնակից՝ տվյալ պահին ներկայացված գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

7.2.3 Պարզեցված ընթացակարգի բացման նիստում հրապարակվում են հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը:

7.2.4 Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

7.3. Սույն հրավերի 7.2.1 կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալներին տրվում են հրավերով նախատեսված պահանջներին «Բավարար» կամ «Անբավարար» գնահատականները: «Բավարար» գնահատականը տրվում է, եթե պարզեցված ընթացակարգի հայտով մասնակցի ներկայացրած տվյալները բավարարում են պարզեցված ընթացակարգի հրավերով դրա համար սահմանված պահանջները: Ընդ որում, թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանության դեպքում հիմք են ընդունվում տառերով արտահայտված տվյալները:

7.4. Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովը պարզեցված ընթացակարգի հայտերը բացելուց հետո կազմում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է.

ա) տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

բ) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

գ) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ պարզեցված ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

դ) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում պարզեցված ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

ե) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

զ) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

է) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

ը) պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում դրա հիմնավորումը.

թ) տեղեկատվություն պարզեցված ընթացակարգի հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

ժ) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

ժա) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

7.5. Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

7.6. Հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

7.7 Հայտերի բացման նիստի արդյունքների հրապարակման օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի կողմից 1-ին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը գրությամբ հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումների մասնակցելու իրավունքը և պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը /տեղեկությունները, որոնք սահմանված են սույն հրավերի II մասում/:

7.7.1. Սույն հրավերի 7.7 կետով սահմանված ժամկետում 1-ին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակցի կողմից գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելու դեպքում տվյալ մասնակիցը սույն հրավերի 7.7 կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի անվամբ բացված հաշվեհամարին մուտքագրում է հայտի ապահովման չափով գումար:

7.8 Գնման պայմանագրերը կարող են իրականացվել ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով: Ընդ որում ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

7.8.1 Եթե ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է նաև ենթակապալի պայմանագրի պատճենը, ինչպես նաև պայմանագրի կողմ հանդիսացող անձի պետական գրանցման վկայականի (անձնագրի) պատճենները, իսկ 1-ին տեղն զբաղեցրած ճանաչվելու դեպքում՝ նաև սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի ա. ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման պահանջներին,

գ. պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ,

դ. մասնակիցն է պատասխանատվություն կրում ենթակապալառուի պարտավորությունների համար:

7.8.2 Մասնակիցները կարող են պարզեցված ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով /կոնսորցիումով/: Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի ա. ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման պահանջներին,

գ. մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն,

դ. կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանի լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

## 8. Պարզեցված ընթացակարգի հայտերի գնահատումը և համեմատումը

8.1. Սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝ պարզեցված ընթացակարգի հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի /տեղեկությունների/ համապատասխանությունը պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, և սույն հրավերով սահմանված կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային /տեխնիկական/ առաջարկի հիմնավորվածությունը:

8.1.1 Կարգի 75-րդ կետի համաձայն՝ հայտի /հայտերի/ ամբողջական և լիարժեք գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու /հայտնաբերվելու/ դեպքում՝ պարզեցված ընթացակարգի քարտուղարը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

ա. շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար,

բ. չշտկվելու դեպքում, գնահատող հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե ներկայացված բոլոր հայտերը չեն համապատասխանում հրավերի պայմաններին, ապա պարզեցված ընթացակարգն այդ հիմքով չկայացած է հայտարարվում:

8.2. Հանձնաժողովի անդամը, հայտի գնահատումն իրականացնելիս, մասնակցի որակավորման հատկանիշներին տալիս է «Բավարար» կամ «անբավարար» գնահատականները: «Բավարար» գնահատականը տրվում է, եթե մասնակցի ներկայացրած տվյալները բավարարում են պարզեցված ընթացակարգի հրավերով դրա համար սահմանված նվազագույն պահանջներին:

8.3 Եթե գնահատող հանձնաժողովի նիստին մասնակցի հայտը՝

ա. գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող, Պատվիրատուն օրենքով սահմանված կարգով մասնակցին ներկայացնում է պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ,

բ. գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, ապա կարգով սահմանված կարգով Պատվիրատուն փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, փաստաթղթերը ներկայացվում և գնահատվում են սույն կարգին համապատասխան:

8.4 Եթե պարզեցված ընթացակարգի մասնակցի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին (կարգին), ապա պարզեցված ընթացակարգի այդ Մասնակցի հայտը մերժվում է:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Եթե պարզեցված ընթացակարգի հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

8.5 Պարզեցված ընթացակարգի հաղթողին որոշելու նպատակով, սույն հրավերով սահմանված կարգով համեմատվում են բավարար գնահատված հայտերը: Բավարար գնահատված հայտերից պարզեցված ընթացակարգում հաղթող է ճանաչվում առավել բարձր գնահատական ստացած առաջարկը:

8.6 Հանձնաժողովը պարզեցված ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստում հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին կամ պարզեցված ընթացակարգը հայտարարում է չկայացած:

8.7 Մասնակցի կողմից ներկայացված հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջարկում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

8.8 Ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին հայտարարելուց հետո կազմվում է պարզեցված ընթացակարգի հայտերի գնահատման նիստի արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

### 9. Պայմանագրի ապահովումը

9.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը ներկայացնում է պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիր կնքվում է, եթե ընտրված մասնակիցը, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է պայմանագրի ապահովում միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի չափը հավասար է պայմանագրի գնի տասը տոկոսին:

9.2 Պայմանագրով կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես ներկայացնում է կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով:

9.3 Պայմանագրի կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրով նախատեսված ժամկետում:

### 10. Պայմանագրի կնքումը

10.1 Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի որոշման հիման վրա Պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է գնման պայմանագիր: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

10.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուց հետո, երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով գնման պայմանագիր կնքելու առաջարկը և գնման պայմանագրի նախագիծը: Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և գնման պայմանագրի նախագիծը ստանալուց հետո անգործության ժամկետի ավարտից հինգ օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

10.3 Մինչև սույն հրավերի 10.2 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

10.4 Մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի ինտերնետային կայքում:

10.5 Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված Մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

### 11. Պարզեցված ընթացակարգի արդյունքների ամփոփումը

11.1 Պայմանագիրը կնքվելու, իսկ պարզեցված ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են պարզեցված ընթացակարգի արդյունքները:

11.2 Եթե պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամը և (կամ) մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է ամփոփման նիստի արձանագրությանը:

### 12. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը

12.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն գնման ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե
ա) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
բ) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
գ) ոչ մի հայտ չի ներկայացվել.
դ) պայմանագիր չի կնքվում:

12.2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

### 13. Մասնակիցների հետ բանակցություններ վարելու անթույլատրելիությունը, տնտեսական մրցակցության սահմանափակման դեպքերը բացահայտելը և կանխարգելելը

13.1 Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ պարզեցված ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

13.2 Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է մասնակցի՝ գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստը, ապա տվյալ մասնակիցը ներառվում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված ցուցակում:

## 14. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

14.1 Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:
14.2 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝
ա) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները՝ գնումների բողոքարկման խորհրդին.
բ) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:
14.3 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:
14.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

14.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

14.6 Եթե բողոքը չի բավարարում Օրենքով սահմանված պահանջներին, ապա գնումների աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

14.7. Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

14.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

14.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա.

4) եթե, Օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուգանքի կիրառում.

5) բոլոր այն դեպքերում, երբ Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի ,,ա,, ենթակետով նախատեսված պատժամիջոցը.

6) հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար.

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

14.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

14.11 Բողոքի քանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում: Պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների գործընթացների վերաբերյալ ներկայացված բողոքների դեպքում հայտարարությունն ուղարկվում է բոլոր հնարավոր մասնակիցներին:

14.12 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

14.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

# ՄԱՍ II

## ՀՐԱՀԱՆԳ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Պարզեցված ընթացակարգի հայտերը (ներառյալ բոլոր փաստաթղթերը), բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

### 2. Պարզեցված ընթացակարգի հայտը

2.1 Պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել պարզեցված ընթացակարգի հայտ: Պարզեցված ընթացակարգի հայտը սույն հրավերով նախատեսված կարգով պարզեցված ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է պարզեցված ընթացակարգին մասնակցելու առաջարկով (հավելված N 1):

2.2 Մասնակիցները պարզեցված ընթացակարգի հայտով ներկայացնում են.

ա) պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանության մասին հայտարարություն այն մասին, որ ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

3) տեխնիկական միջոցներ,

4) ֆինանսական միջոցներ,

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտարարություն այն մասին, որ Մասնակիցը՝

1) դատական կարգով սնանկ չի ճանաչվել.

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար կամ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված է կամ մարված է,

4) ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ինչպես նաև հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում:

բ) գնային առաջարկ՝ հավելված N 3,

գ) պարզեցված ընթացակարգի հայտի ապահովում՝ հավելված N 4,

դ) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ)՝ հավելված N 3.1

ե) էլեկտրոնային փոստի հասցեն:

### 3. Մասնակցի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը

3.1.Գնումներին մասնակցելու պարզեցված ընթացակարգի հրավերի I մասի 2-րդ կետով նախատեսված՝ որակավորման իր չափանիշները հավաստելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն հրավերի 7.7 կետով նախատեսված գրությունը՝ հավելված N 5, որին կցվում են.

ա) պետական գրանցման վկայականի (ներառյալ՝ բոլոր ներդիրների) պատճենը՝ կնքված և ստորագրված Մասնակիցի կողմից՝ «իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է):

բ) հայտարարություն՝ Մասնակցի կողմից հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված գնման առարկա հանդիսացող կամ համանման աշխատանքների կատարման գործարքների՝ նախկինում կատարված պայմանագրերի մասին՝ հավելված N 5.1:

գ) հայտարարություն՝ Մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման /նմանատիպ/ առնվազն մեկ պայմանագրի մասին՝ հավելված N 5.1.1: Ընդ որում նախկինում կատարված առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալը չպետք է պակաս լինի պարզեցված ընթացակարգի շրջանակներում կատարվող գնումների ծավալի հիսուն տոկոսից: Նշված հայտարարությանը անհրաժեշտ է կցել.

- նախկինում կատարված պայմանագրի պատճեն, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումը հավաստող ակտի /հանձնման-ընդունման արձանագրության և այլն/ պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը,

դ) տեղեկանք առկա ֆինանսական միջոցների մասին՝ հավելված N 5.2, որին անհրաժեշտ է կցել բանկի հետ կնքված վարկային գծի տրամադրման մասին պայմանագիր կամ բանկային երաշխիք: Ընդ որում, վարկային գծի կամ բանկային երաշխիքի չափը չպետք է պակաս լինի մասնակցի գնային առաջարկի տասը տոկոսից, իսկ վարկային գծի տրամադրման պայմանագրի կամ բանկային երաշխիքի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի պայմանագրի ամբողջ ծավալով կատարման վերջնաժամկետից, որը չի ներառում երաշխիքային ժամկետը.

3.2 Պարզեցված ընթացակարգի հայտում ներառվող՝ տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով:

3.3 Եթե գնման պայմանագիրն իրականացվելու է ենթակապալի կամ կոնսորցիումի միջոցով, ապա կիրառվում են սույն հրավերի 7.8 կետով սահմանված պայմանները:

3.4 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.5 Սույն հրահանգի բոլոր այն փաստաթղթերը, որոնք կնքվում (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի դեպքերում) և ստորագրվում են մասնակցի կողմից, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք պահանջվել են կնքված (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի դեպքերում) և ստորագրված լինեն տրամադրողի կողմից՝ պետք է կնքված և ստորագրված լինեն բնօրինակով:

3.6 Մասնակիցը իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

## 4. Պարզեցված ընթացակարգի հայտի գնային առաջարկը

4.1 Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է պայմանագրի կատարման ապահովման նպատակով կատարվելիք բոլոր վճարները /ծախսերը/, այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը: Մասնակցի գնային առաջարկը, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, ներկայացվում է ինքնարժեք /վաճառքի ինքնարժեք/, շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ընդ որում, ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ Մասնակիցը չի ներկայացնում:

4.2 Պարզեցված ընթացակարգի հայտի գինը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

4.3 Գնի վերաբերյալ առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել սույն հրավերի հավելված 3-ով նախատեսված տեսքով, որին կցվում է առաջարկվող գնի ինքնարժեքի հաշվարկը՝ Մասնակցի կողմից կազմված ծավալաթերթ-նախահաշիվը, որի լրացման օրինակելի ձևը կցվում է (հավելված N 3.1), ընդ որում՝ ծավալաթերթ-նախահաշվի և դրան կից ինքարժեքի հաշվարկի բոլոր էջերը պետք է ստորագրված և կնքված լինեն մասնակցի կողմից:

4.4 Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

## 5. Պարզեցված ընթացակարգի հայտերը պատրաստելու կարգը

5.1 Մասնակիցը պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը

կազմվում են բնօրինակից և 1 օրինակ պատճենից, ընդ որում բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը պետք է կնքված և ստորագրված լինեն Մասնակցի կողմից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ` գործակալ): Եթե պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա պարզեցված ընթացակարգի հայտը կազմելու լեզվով նշվում են

ա) պատվիրատուի անվանումը և պարզեցված ընթացակարգի հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) պարզեցված ընթացակարգի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

Հավելված 1

«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԱԾԲ-5» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի
«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

*Պարզեցված ընթացակարգին մասնակցելու առաջարկ*

________________________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

պարզեցված ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

,Բջնիի կոմունալ ծառայություններ ՀՈԱԿ-ի կողմից ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5 ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է պարզեցված ընթացակարգի հայտը:

________________________________________ ____________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

____________________ 201 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2

«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի
«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մասնակցի որակավորման չափանիշների վերաբերյալ

1. ______________________________________________ հայտարարում է, որ.

Պարզեցված ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

ա) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

բ) մասնագիտական փորձառություն,

գ) տեխնիկական միջոցներ,

դ) ֆինանսական միջոցներ,

ե) աշխատանքային ռեսուրսներ:

2. ______________________________________________ հայտարարում է, որ.

Պարզեցված ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ա) դատական կարգով սնանկ չի ճանաչվել,

բ) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

գ) գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար կամ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված է կամ մարված է,

դ) ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. ______________________________________________ հայտարարում է նաև, որ.

Պարզեցված ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն առկա չէ:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

201 թ.

(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 3*

*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*

*պարզեցված ընթացակարգի հրավերի*

*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*

*պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին*

Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ____________________________________-ն

պարզեցված ընթացակարգի մասնակցի անվանումը(անունը)

առաջարկում է ծառայության պայմանագիրը կատարել(
),

թվերով

(
) ՀՀ դրամով,

տառերով

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնի առաջարկը՝ ներառյալ ԱԱՀՆ (ՀՀ դրամ) | | ԱԱՀ-ն (ՀՀ դրամ) | |
|---|---|---|---|---|---|
| | | թվերով | տառերով | թվերով | տառերով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Բջնիի վարչական համայնքի կարիքների համար ավտոաշտարակի ծառայության ձեռք բերում | | | | |

Գինը չի կարող ավելին լինել՝ նախատեսված հատկացման չափից:

Կից ներկայացնում ենք առաջարկվող գնի հաշվարկը

________________________________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

____________________201 թ.

(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 3.1*
*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*
*պարզեցված ընթացակարգի հրավերի*
*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*
*պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին*

*Ո չ գ ն ա յ ի ն  ա ռ ա ջ ա ր կ  (տ ե խ ն ի կ ա կ ա ն  ա ռ ա ջ ա ր կ)*

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը,այդ թվում՝ կնքվելիք գնման պայմանագրի նախագիծը______________________________-ն

ծառայության անունը (անվանումը)

առաջարկում է  պայմանագիրը կատարել

ա) կամ նախագծով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան

բ) կամ  նոր՝ կից ներկայացվող տեխնիկական առաջարկներին համապատասխան

* Ծանոթություն 1՝ Նոր առաջարկները կցվում են

* Ծանոթություն 2՝ Նշել ընտրվող տարբերակը (ները)

____________________________________________________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

__________________________201 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 4

*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի*

*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին*

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5

ք./գ. ____________ « » « » 201 թ.

1.1 «------------» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----------յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

*1. Համաձայնության առարկան*

1.2 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է Բջնիի կոմունալ ծառայություններ ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից ............................................................................................аշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ԿՄԵՔ-ՊԸԾՁԲ-5 ծածկագրով պարզեցված ընթացակարգին, պետք է ներկայացնի պարզեցված ընթացակարգի հայտի ապահովում և պարզեցված ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.2.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված N ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5 ծածկագրով պարզեցված ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ____թվերով______ (տառերով__________) ՀՀ դրամի չափով:

1.2.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.2.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.2.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.2.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «______ ____________________________» բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով Ընկերությունը հանձնարարում է «____________ ____________________» բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

*2. Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնման գործընթացի ավարտը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

*Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները*

..................................................................................

Ընկերության անվանումը, հասցեն

..................................................................................

Ընկերությանը սպասարկող բանկը, h/h

..................................................................................

ՀՎՀՀ

տնօրեն ..................................................................

ստորագրություն, ԱԱՀ

Կ.Տ.

*Հավելված 5*

*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*

*պարզեցված ընթացակարգի հրավերի*

*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*

*պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին*

*„ԲՋՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԱԿ*

Կից ներկայացնում եմ «ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

____________________________________________________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

__________________________ 201 թ.

(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 5.1*
*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*
*պարզեցված ընթացակարգի հրավերի*
*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*
*պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին*

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Նախորդ ժամանակահատվածում կատարված նմանատիպ աշխատանքների մասին

Սույնով ________________________________________________________________-ն հայտարարում է, որ

պարզեցված ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր, որոնց ցանկը ներկայացվում է ստորև.

| Նախկինում կատարված պայմանագրերի | | |
|---|---|---|
| առարկան | գումարը (դրամ) | պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները |
| 1 | 2 | 3 |
| Տարեթիվը՝ .......... թվական | | |
| 1. | | |
| 2. | | |
| .. | | |
| Տարեթիվը՝ .......... թվական | | |
| 1. | | |
| 2. | | |
| .. | | |
| Տարեթիվը՝ .......... թվական | | |
| 1. | | |
| 2. | | |
| .. | | |

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

____________________201 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1.1
«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի
«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Նախորդ ժամանակահատվածում կատարված համանման /նմանատիպ/ առնվազն մեկ պայմանագրի մասին

Սույնով ______________________________________________________-ն հայտարարում է, որ

(պարզեցված ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման /նմանատիպ/ առնվազն մեկ պայմանագիր, որի ընդհանուր գումարը կազմում է ______________________(______________________)(
).

թվերով                    տառերով

Կից ներկայացնում ենք______________________

Նախկինում կատարված պայմանագրի պատճեն, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումը հավաստող ակտի /հանձնման-ընդունման արձանագրության և այլն/ պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

______________________________________________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

______________________201 թ.

(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 5.2*

*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*

*պարզեցված ընթացակարգի հրավերի*

*«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով*

*պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին*

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին

______________________________-ն հավաստում է, որ Ընկերության

Բաց ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ֆինանսական միջոցները______________________________.

ամսաթիվը, ամիսը, տարին

դրությամբ կազմում են
ՀՀ դրամ:

Կից ներկայացնում ենք ______________________________

բանկի հետ կնքված վարկային գծի տրամադրման մասին պայմանագիրը կամ բանկային երաշխիքը

*Բանկային երաշխիքի օրինակելի ձևը կցվում է*

______________________________________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

____________________201 թ.

(ամսաթիվը, ամիսը)

ԵՐԱՇԽԻՔ /Օրինակելի ձև/

ք. ____
2014թ.

«____»

Ընդունելով ի գիտություն, որ «Բջնիի կոմունալ ծառայություններ» ՀՈԱԿ-ի կողմից «ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար (Մասնակցի անվանումը)............................ ՍՊԸ-ն (այսուհետև Ընկերություն) պարտավոր է ներկայացնել ֆինանսական միջոցների առկայությունը հավաստող բանկային երաշխիք, ուստի սույնով ...........(մասնակցին սպասարկող բանկի անվանումը )............................ՓԲԸ-ն (այսուհետև Երաշխավոր) հավաստում է, որ սույն երաշխիքի տրամադրման պահից մինչև ......(նշվում է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ժամկետի ավարտը)........ ներառյալ ընկերության ֆինանսական միջոցները կկազմեն ոչ պակաս, քան ..........թվերով (տառերով)................ՀՀ դրամ:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

Սույն երաշխիքը ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում մինչև ......(նշվում է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ժամկետի ավարտը)........ ներառյալ:

Բանկի վարչության նախագահ` ----------------------------------/ /

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ` ----------- ------------------/ /

*Հավելված 6*

«ԿՄԲԳ ԲԿԾ-ՊԸԾՁԲ-5/ » ծածկագրով

պարզեցված ընթացակարգի հրավերի

# ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Գ. Բջնի
201 թ.

«-----» ---------------

«Բջնիի կոմունալ ծառայությունների» ՀՈԱԿ-ը դեմս տնօրեն Բ. Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև «Պատվիրատու», մի կողմից, և « » ------ն, ի դեմս Ընկերության տնօրեն -------------ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև «Կապալառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 21. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև Պայմանագիր), սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում (հավելված 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի ԱԳՊ 18/5241/ԳԱՋ 53 / - ավտոաշտարակի ծառայություն (այսուհետև Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Վաճառողն Ապրանքը մատակարարում է սույն Պայմանագրով նախատեսված Ստացողին (այսուհետև Ստացող) հավելված 2-ով նախատեսված ծավալներով և ժամկետներում:

1.3 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

1.4 Ապրանքների մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

### 2.1 Գնորդն իրավունք ունի

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տույժանքը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը :

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

2.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմամագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

2.1.9 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

2.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն

բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

2.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանքը՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

2.3.3 Գնորդից (Ստացողից) պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

2.3.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի (Ստացողի) համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**2.3.6 Սույն պայմանագրի ոչ ավելի, քան ----- տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:**

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին / Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

2.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան Ապրանքը Գնորդին (Ստացողին) մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

2.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.4 Գնորդին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.5 Գնորդին(Ստացողին) հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք: Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

*2.4.6 Ձեռի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել ձեռի մատակարարվածը:*

2.4.7 Հետ տանել Գնորդի (Ստացողի) կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Սույն Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

### 3. Ապրանքի հանձնումը և ընդունումը

3.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Պայմանագրով նշված Ստացողին սույն Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

3.2 Վաճառողը Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

### 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է ----------- (------------------------------) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Յուրաքանչյուր միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

4.1.1 Պայմանագրի գնի --------- տոկոսը ----------- (------------------------------) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին որպես կանխավճար, որը հաշվարկվում է ապրանքի ընդհանուր գնի մեջ և մարվում մինչև ապրանքների մատակարարման ավարտը: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանգրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Ապրանքի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողությունը) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

4.4 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված 3-ով, նախատեսված ամսում, (Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

5.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ պայմանագրի գնի 0.05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.3 Սույն պայմանագրի 5.2 և 5.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

5.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք Պայմանագրի ընդհանուր գնի 0.5%-ի չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողը հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

*7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործի մինչև կողմերի պարտականությունների լիրվ կատարումը:*

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1-4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.6 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.7 Սույն պայմանագրով Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

Պատվիրատուն ի դեմս ______________________________________________

Կատարողը ի դեմս ______________________________________________ հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման «___» ___________ 200 թ.կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N ___ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով

նախատեսված ստորև նշված աշխատանքները, մատակարարումները, ծառայությունները (այսուհետև աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին:

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «___»___________ 20 թ.-ից «___» _________ 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

| Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը | Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազ. դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ - ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց ____________ (Ստորագրություն)

Աշխատանքը ընդունեց ____________ (Ստորագրություն)

ազգանուն ____________________

Կենտրոնացված գնումների դեպքում նշել սույն պետական մարմնի անվանումը որի կարիքների համար իրականացվել և որի կողմից պետք է ֆինանսավորվեն այդ գնումները

ՎՀ 16028015514600
ՀՎՀՀ 02809601

Տնօրեն Բ. Հովհաննիսյան

Կ.Տ.

ՁԼ N1
Հաստատված

____ ի N ________ հրաման

Կատարող

________________

________________

________________

հասցե ________________
հհ ________________

________________
հվհհ ________________

Պատվիրատու

________________

________________

________________

հասցե ________________
հհ ________________

________________
հվհհ ________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ______
ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» ____________20 _ թ.

Պայմանագրի անվանումը ________________

________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը «____» «__________» 200 _ թ. Պայմանագիր համարը

ՎՏԲ Հայաստան բանկ Չարենց. մ/ճ.
Հ/Հ 16028015514600
ՀՎՀՀ 02809601

Բ. Հովհաննիսյան

Կ.Տ.

հավելված 3

« » 2014թ. կնքված
ՆԿԱՐԳ ԲԿԾ ՊԸԱՊՁԲ 5/ գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի անվանումը | Ֆինանսավորման ժամկետը |
|---|---|
| ԱԳՊ 18/5241/ԳԱՁ 53 / ավտոաշտարակ | 100%, երկկողմ հանձնման-ընդունման արձանագրության կազմման օրվանից հաշված տաս բանկային օրվա ընթացքում |

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

<Բջնիի կոմունալ ծառայություններ> ՀՈԱԿ

ՎՏԲ Հայաստան բանկ Չարենց. մ/ճ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հատ | X | 1 | 2 | 1 | 2 | X |

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

<Բջնիի կոմունալ ծառայություններ> ՀՈԱԿ

« » 2014թ. կնքված
ՆԿՄԲԳ ԲԿԾ ՊԸԱՊՉԲ 5/ գնման պայմանագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափի միավորը | Միավորի արժեքը | 2014թ. ընթացքում ըստ ամիսների ծառայության մատուցման քանակը | | | | Գումարը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |

Հավելված 1
« » 2014թ. կնքված
ՆԿՄՊԳ ԲԿԾ ՊԸԱՊՁԲ 5/ գնման պայմանագրի

## Գնման առարկայի տեխնիկական բնութագրեր

| Գնման առարկայի անվանումը | ԱԳՊ 18/5241/ԳԱԶ 53 / |
|---|---|
| Գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ տվյալներ | Թողարկման տարեթիվը՝ 1982թ. ,գույնը՝ պաշտպանական, մակնիշը՝ԱԳՊ 18/5241/ԳԱԶ 53 /, թափքի տեսակը՝ ավտոաշտարակ, վառելիքի տեսակը բենզին /գազ/, հզորությունը՝ 110-150ձ/ուժ, փոխանցման տուփը՝ 4 աստիճան, աշտարակի բարձրությունը՝ 18 մետր և ավելի |
| Հետերաշխիքային սպասարկում | Գնորդի կողմից դիմելու դեպքում, իրականացվում է Վաճառողի կողմից՝ երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտից հետո տվյալ պահին Վաճառողի մոտ գործող գներից ________%-ով ցածր: |
| Երաշխիքային սպասարկում | Առնվազն 12 ամիս |

ԳՆՈՐԴ
<Բջնիի կոմունալ ծառայություններ> ՀՈԱԿ

ՎՃԱՌՈՂ

ՎՏԲ Հայաստան բանկ Չարենց. մ/ճ
Հ/Հ 16028015514600
ՀՎՀՀ 02809601